Հավելված N 2
ՀՀ կառավարության 2026 թվականի
փետրվարի 19-ի N 195 - Ն որոշման

ՀԱՎԱՍՏԱԳՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն հավելվածով սահմանվում է սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեություն իրականացնելու համար հավաստագրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի (այսուհետ նաև՝ հավաստագրված անձինք) ռեեստրի վարման կարգը:

2. Ռեեստրի վարումը ներառում է հավաստագրված անձանց, սոցիալական ծառայություն տրամադրելու հավաստագրերի, հավաստագրված անձանց գործունեության վերաբերյալ ընթացիկ տեղեկությունների, օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացված ստուգումների, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության, ընդունված որոշումների տվյալների, ինչպես նաև հավաստագրի վերաձևակերպման, հավաստագրի գործողության կասեցման, դադարեցման տվյալների (տեղեկությունների) գրանցումը:

3. Ռեեստրի վարումն իրականացվում է սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության հավաստագրման տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ տեղեկատվական համակարգ) միջոցով: Ռեեստրը տեղեկատվական համակարգի բաղկացուցիչ մասն է:

4. Տեղեկատվական համակարգի միջոցով ռեեստրում առցանց, ինքնաշխատ, իրական ժամանակի ռեժիմով ներառվում են՝

1) հավաստագրված անձանց տվյալները՝

ա. կազմակերպության անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը,

բ. պետական գրանցման համարը (անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը) և հարկ վճարողի հաշվառման համարը,

գ. գտնվելու վայրի հասցեն (անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրի հասցեն),

դ. կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը,

ե. հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, կայքէջին և սոցիալական ցանցերին հղումները՝ առկայության դեպքում.

2) սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության հավաստագրի (այսուհետ՝ հավաստագիր) տվյալները՝

ա. հավաստագիրը տվող մարմնի անվանումը,

բ. հավաստագրի համարը,

գ. հավաստագիրը տալու օրը, ամիսը, տարին,

դ. հավաստագրված անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, կազմակերպության անվանումը,

ե. հավաստագրված անձի պետական գրանցման (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման) համարը,

զ. սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեությունը՝ համաձայն սույն որոշման N 1 հավելվածի 8-րդ կետի,

է. սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության իրականացման վայրը (հասցեն), ներառյալ ժամանակավոր վայրը (հասցեն), իսկ տնային պայմաններում խնամքի դեպքում՝ սպասարկման տարածքը,

ը. հավաստագրի գործողության ժամկետը.

3) հավաստագրված անձանց գործունեության վերաբերյալ ընթացիկ տեղեկությունները՝

ա. հավաստագրված սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեությանն ուղղված ծրագրի համառոտ նկարագիրը,

բ. կիրառվող մեթոդաբանության նկարագիրը,

գ. մատուցվող ծառայությունների ամփոփ նկարագիրը.

4) ստուգումների, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վերաբերյալ տվյալները՝

ա. օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացված ստուգումների՝ ներառյալ ստուգման ենթարկված անձանց, ստուգման արդյունքների տվյալները.

բ. վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի հարուցման օրը, ամիսը, տարին, վարչական պատասխանատվություն նախատեսող հոդվածը,

գործի քննության արդյունքով կայացված որոշումը (գործը կարճելու կամ վարչական տույժ նշանակելու մասին որոշումը),

գ. վարչական տույժ նշանակելու մասին որոշման օրը, ամիսը, տարին, որոշմամբ հաստատված հանգամանքները, վարչական պատասխանատվություն նախատեսող հոդվածը, ինչպես նաև համապատասխան նվազագույն չափորոշիչը սահմանող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի նորմը (նորմերը).

5) հավաստագրի վերաձևակերպման, հավաստագրի գործողության կասեցման, դադարեցման վերաբերյալ տվյալները՝

ա. հավաստագրի վերաձևակերպման հիմքը, կատարված փոփոխությունները, վերաձևակերպման օրը, ամիսը, տարին,

բ. հավաստագրի կասեցման հիմքը, կասեցման համար հիմք ծառայած հանգամանքների համառոտ շարադրանքը, հավաստագրի կասեցված լինելու ժամանակահատվածը,

գ. հավաստագրի դադարեցման հիմքը, դադարեցման համար հիմք ծառայած հանգամանքների համառոտ շարադրանքը, հավաստագրի դադարեցման օրը, ամիսը, տարին:

5. Սույն հավելվածի 4-րդ կետով նախատեսված տվյալների (տեղեկությունների) գրանցումն իրականացվում է՝ ըստ հավաստագրված անձանց:

6. Սույն հավելվածի 4-րդ կետի՝

1) 1-ին ենթակետով նախատեսված տվյալները (տեղեկությունները) ստացվում են Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տեղեկատվական համակարգից, բացառությամբ նույն կետի 1-ին ենթակետի «ե» պարբերությամբ նախատեսված տվյալների (տեղեկությունների), որոնք տեղեկատվական համակարգ են մուտքագրվում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման իրավասու աշխատողի կողմից.

2) 2-3-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված տվյալները (տեղեկությունները) տեղեկատվական համակարգ են մուտքագրվում նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման իրավասու աշխատողի կողմից.

3) 4-րդ ենթակետով նախատեսված տվյալները (տեղեկությունները) տեղեկատվական համակարգ են մուտքագրվում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և առողջապահական տեսչական մարմնի կողմից:

7. Սույն հավելվածի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված դեպքում հավաստագրի վերաձևակերպումից հետո հավաստագրված անձի վերաբերյալ տվյալները (տեղեկությունները) գրանցվում են՝ ըստ փոփոխված տվյալների՝ նշում պարունակելով մինչև վերաձևակերպումը եղած տվյալների (տեղեկությունների) վերաբերյալ:

8. Հավաստագրի գործողության դադարեցումից հետո կազմակերպությունը համարվում է ռեեստրից հանված, իսկ սույն հավելվածով նախատեսված տվյալներն էլեկտրոնային եղանակով արխիվացվում են օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Ռեեստրում պարունակվող տվյալները (տեղեկությունները) հավաստագրված անձանց տրամադրվում են տեղեկատվական համակարգի միջոցով կատարված հարցման հիման վրա:

10. Ռեեստրում պարունակվող տվյալները (տեղեկությունները) պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններին հասանելի են տեղեկատվական փոխգործելիության շրջանակներում: Այլ անձանց ու կազմակերպություններին այդ տվյալները (տեղեկությունները) տրամադրվում են օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

24.02.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ